ԵՐԵՎԱՆԻ Լ.ԵՈՅԻ ԱՆՎԱՆ Հ. 65 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ

Ա Շ Խ Ա Տ Ա Ն Ք

Առարկա - ՆԶՊ և ԱԿ

Մասնակից- Գևորգյան Գևորգ

Ղեկավար - փոխգնդապետ Ա. Իսահակյան

Թեմա - Արտադասարանական խնբակների կազմակերպումը ՆԶՊ առարկայի շրջանակներում

2022թ.

Բովանդակություն

1. Ներածություն
2. Գլուխ մեկ
3. Եզրակացություն
4. Առաջարկություններ
5. Օգտագործված գրականության ցանկ

Ներածություն

Ժողովրդի բախտը՝ նրա բարոյական, մտավոր, ֆիզիկական բոլոր հնարավորությունների հավաքական ուժի և դրանց անընդմեջ ծաղկնամ ու զարգացման մեջ է: Մեր մանուկներին, պատանիներին, երիտասարդներին պետք է լուսավորել և ոգեվորել ազգանվեր գործերով: Սա է մեր ազգի գոյատևման, մեր Ազատությունը և Անկախությունը փրկելու և պաշտպանելու ուղին, մեր Միասնությունը ամրապնդելու ճանապարհը: Եվ այսօր յուրաքանչյուր հայ մարդ պետք է ընդունի որպես պատգամ մեր ազգի բախտով տոգորած հայրենակարոտի հանձնարարականը՝ «Ավելի լավ է մոմը վառել, քան թե խավարն անիծել»: Հայաստանի անկախության պայմաններում ինչպես երբեք, պետք է լինենք առավել կարգապահ, կազմակերպված, միակամ և միասնական: Պետք է ապավինել մեր ուժերին՝հարազատ մնալով մեր ժողովրդի բնածին հատկանիշներին՝ հայրենասիրության և ռազմարվեստի բարձր կարողություններին: Ասես բնությունը հայ ժողովրդին ընտրել է ենթարկվելու համար մարդկային հնարավորությունների սահմանների մեջ չտեղավորվող ամենացածր փորձությունների, նրա տոկունությունը ստուգելու նպատակով: Ավելի քան չորս հազարամյակ հայ ժողովուրդը, չնայած ծովածավալ տարածքների ու մարդկային կորուստների, զարմացրել է աշխարհին իր հոգևոր և ֆիզիկական ուժերի դիմացկունությամբ, արարչական կենսունակությամբ, գոյատևելու անկոտրուն կամքով:

Արևի տակ մեր հինավուրց տեղը պահպանելու և գոյատևելու գաղտնիքը Հաբեթոսյան Հայկից մինչև այժմ մեր արարչագործ ժողովրդի հայրենասեր և ազգանվեր անհատների անպակասությունն է:

Բազում հայորդիներ ոտքի կանգնեցին և անվարան նետվեցին դարավոր թշնամու կողմից պարտադրված պատերազմի կրակների մեջ, այնտեղից դուրս բերեցին Արցախի հաղթանակի ջահը: Մեր ժողովրդին երջանկություն պատճառած այդ Ջահի լուսավորության իսկական հրաշագործությունն ու գնահատանքը ավելի

ցայտուն կերևա ապագայում, երբ պատմական իրադարձությունները հետազոտողները անմահ ֆիդայիների և Հայրենական Մեծ պատերազմի հուշամատյանում կհանդիպեն նաև Արցախյան պատերազմի սխրագործություններն արտացոլող մի շողշողուն էջի։

Հայ ժողովրդին պարտադրված պատերազմը, չնայած թշնամու ուժերի բացարձակ գերակշռությանը, ավարտվեց նրա փայլուն հաղթանակով։ Այդ ահավոր զինված բախումներում՝ հայրենիքի պաշտպանության սուրբ գործում, դրսևորվեցին հայ մարտիկների ոգու արիությունն ու հայրենիքի ազատության համար պայքարելու բարձր գիտակցությունը։ Շատերը զոհվեցին հերոսի մահով։ Հավերժ փառքի արժանացավ ու իր անունը անմահացրեց մեր ժողովրդի պատմության մեջ այդ պայքարի առաջին կազմակերպիչներից մեկը՝ երջանկահիշատակ Վազգեն Սարգսյանը։

Մի՞թե հայրենասիրության ամենահաղթ ուժն ու բարձր գիտակցությունը չէր, որ Մոնթե Մելքոնյանը, արհամարելով մահն ու վտանգները, հրաժարվեց արտասահմանում բարեկեցիկ կյանքից և գիտական գործունեությունից ու այդ ամենը զոհաբերեց պապենական հողերի ազատագրման պայքարին։

Նույն վեհ գաղափարներով ղեկավարվեցին խորհրդային, ապա Ռուսաստանի Դաշնության բանակում ծառայող բարձրաստիճան շատ հայ սպաներ և գեներալներ, ովքեր թողնելով իրենց զբաղեցրած բարձր պաշտոնները եկան ու հերոսաբար մասնակցեցին ազատագրական մարտերին, հայոց ազգային բանակի ստեղծմանն ու կայացմանը։ Այդպիսին է հայրենասերների ճանապարհը։

Աշխարհի բոլոր ժողովրդներն էլ ժամանակային ինչ-որ հանգրվանում իրենց պատերազմը տվել են։ Հաղթել են, պետություն են ստեղծել այն ժողովրդները, որոնք պատերազմի կես ճանապարհին չեն հոգնել։ Ծանր սոցիալական պայմաններում դաստիարակված, սոցիալական անարդարություններ տեսած ու հասկացած զինվորացու պատանին իր ընտանիքի դժգոհության լիցքը տեղափոխում է բանակ։

Մեզ համար անասանելի դժվար է այդ լիցքի հաղթահարումը։ Ծնողները պետք է նախապատրաստեն իրենց որդիներին բանակային ծառայության։ Սերմանեն նրանց մեջ ուժ՝ դիմագրավելու դժվարությունները։ Պատանուն պետք է ներշնչել տղամարդ դառնալու անհրաժեշտությունը, ցավը, դժվարությունը արժանավայել տանելու կամք դաստիարակել նրա մեջ։

Հիմա անդրադառնանք մեկ այլ կարևոր հարցի՝հասարակությունը մեզ տալիս է անպատրաստ զինվոր։ Դպրոցը վատ է զբաղվում մեր ապագա զինվորների գաղափարական և հանրակրթական դաստիարակությամբ։ Այս հոգսն էլ բանակն է քաշում՝բանակային իր հիմնական խնդիրներին ավելի քիչ ժամանակ հատկացնելով։

Յուրաքանչյուր զինվոր իր ընտանիքի գաղափարախոսության, իր ընտանիքի տրամադրության կրողն էբանակում։ Ծանր սոցիալական պայմաններում դաստիարակված, սոցիալական անարդարություններ տեսած ու հասկացած զինվորացու պատանին իր ընտանիքի դժգոհության լիցքը տեղափոխում է բանակ։ Մեզ համար անասանելի դժվար է այդ լիցքի հաղթահարումը։ Ես շատ եմ խնդրում ծնողներին՝ նախապատրաստեք ձեր որդիներին բանակային ծառայության։ Սերմանեք նրանց մեջ ուժ՝ դիմագրավել դժվարությունները։ Շատ բան կախված է բանակի հանդեպ հասարակության մոտեցումից։Դարձյալ հանգեցինք մույն մտքին՝ բանակ-հասարակություն դաշինքին։ Բայց նաև սուբյեկտիվ գործոն կա՝Պաշտպանության նախարարը նույնպես այս տարիների ընթացքում փոխվել է, հասունացել է։ Եվ գտնում է, որ սթափ, հանգիստ և հավասարակշիռ մոտեցումները ավելի կնպաստեն բանակաշինությանը։ Իսկ պատերազմին պատրաստ լինելը միայն բանակի խնդիրը չէ։ Իր հերթին հասարակությունն էլ պետք է պատրաստ լինի պատերազմին, ինչպես խաղաղությանը։ Առանց միաբան, համահավաք հասարակության դժվար է խաղաղությունը՝ առավել ևս պատերազմը մարսել։

Չեմ նվազեցնում։ Մենք 1988թ-ին համազգային շարժման ներուժը կրողներն ենք։ Այդ ներուժն եր, որ մեզ հասցրեց հաղթանակների, որ մեզ հնարավորություն tvec

5-6 տարվա ընթացքում 10-15 տարվա աշխատանք կատարել բանակաշինության ասպարեզում։ 1988 թվականի ներուժը պահեց մեր ոգեղենությունը, մեր համախմբվածությունը։ Մենք ցույց տվեցինք, որ հայ ժողովուրդը ավելի ձևավորված ազգ է։ Կա նաև հայտնի ճշմարտություն՝ անհատն է, որ ոգևորում է , իր ետևից տանում է հասարակությանը։ Մեր պատմությունը հասարակության և անհատի փոխըմբռման ավելի կատարյալ փաստ, քան 1988թ-ին էր, չունի։ Եթե ունենար՝ մենք վաղուց հաղթած կլինեինք։

Մի առիթով սպարապետ Վազգեն Սարգսյանին հարցրեցին, թե պետություն ստեղծելու և պաշտպանելու մասին ինչ է մտածում, նա ասաց հետևյալը՝ աշխարհի բոլոր ժողովուրդներն էլ ժամանակային ինչ որ հանգրվանում իրենց պատերազմը տվել են։ Հաղթել են, պետություն են ստեղծել այն ժողովուրդները, որոնք պատերազմի կես ճանապարհին չեն հոգնել։ Ռուսները, երբ զգային, որ բանակների պատերազմում տանուլ են տալիս Նապոլեոնին, հնարեցին Հայրենական պատերազմը։ Եվ դա ամենագեղեցիկ բանն է, որ երբևէ հնարել է որևէ ժողովուրդ։ Ասելիքս այն է, որ մեր պատմության շառավիղներում մենք չցուցաբերեցինք համապատասխան կամք, հավաքականություն, չունեցանք մեր հիսունհազարանոց բանակը, չունեցանք Հայրենական պատերազմ հնարելու ռուսական հրաշագործ միտք, այլապես այսօր ֆրանսիացու պես կճամփորդեինք, կսիրեինք, դեմոկրատիա կխաղաինք, մարդու իրավունքներից կխոսեինք, կենդանիների և բնության պահպանության շարժումներ կծավալեինք, կովկասյան տուն կառուցելու գաղափար կմոգոնեինք։ Մենք մեր ազգային պատերազմը անընդհատ հետաձգել, բերել հասցրել ենք 21-րդ դարի շեմին, հիմա էլ նստենք մտածենք թե այդ կռվում առժ՞ե թե չարժ՞ե զոհվել։

1915թ. առանց լուրջ դիմադրության թողեցինք, որ մեզանից միլիոն ու կեսին կոտորեն։ Տարիներ հետո սերունդները մեր մասին դատելու են ոչ թե նրանով, որ 1989-95թթ. հինգ հազար հրաշալի զինվոր կորցրեցինք, այլ այսպես՝ ստեղծեցի՞նք պետություն թե ոչ, պաշտպանեցի՞նք մեր հայրենիքի սահմանները, թե ոչ։

Եզրակացություն. Օրը ծնվում է իր հետ բերելով իր գեղեցկությունը, իր հոգսը, իր տագնապը: Այն, ինչ երեկ գյուտ էր, ասյօր դառնում է սովորական մի բան: Բանակի երեկվա տեսքը չի գոհացնում մեզ: Հենց այս անբավարարվածության զգացումով էլ աչքը բացում են բանակը և նրա պատասխանատուները: Եվ ամեն ինչ սկսվում է զրոյից:

Մարտական պատրաստականությունը, բանակի գերխնդիրը, բավարար է, բայց այն չէ: Զինծառայողների սոցիալական վիճակը՝ բարելավման նախանշաններ կան, բայց գոհացուցիչ չէ: Կարգապահությունը՝ էական տեղաշարժ կա, բայց ցավալի վրիպումները դեռ շատ են: Հարթված չեն իշխանություն-բանակ-ընդիմություն հաղորդակցության ուղիները: Հասարակությունը դեռևս կասկածանքով է նայում բանակին: Սիրո, վստահության, համերաշխության այն չափաբաժինը, որին արժանի է բանակը, չի ստանում հասարակությունից: Անգթորեն խոչընդոտում են այս դաշինքի կայացմանը: Մերը ցավերը բուժելուն օգնելու փոխարեն չարախնդում են դրանց վրա: Բանակը, որի աչքը թշնամուն է ուղղված, իր թիկունքում անհրաժեշտ ջերմության ալիք չի զգում:

Հիմա էլ հայ ծնողը իր տասնյակ հազարավոր զավակներին է վստահում բանակին: Մենք պարտավոր ենք վարձահատույց լինել նրան իր վստահության համար:

Առաջարկություն. Բանակին կիրթ, բանիմաց և արհեստավարժ զինվոր ապահովելու գործին պետք է լծվեն ՆԶՊ ուսուցիչներ հետևյալ ՆԶՊ ծրագրով, որը կտա բանակին նոր որակով զինվոր։

Առաջնորդվելով հայրենիքի պաշտպանությանը, հզորացմանն ու առաջընթացին կոչված հայ ժողովրդի ազատասեր նախնիների սուրբ պատգամներով .

կարևորելով պետության և հասարակության զարգացման նպատակով մարդ-անհատ, ***ազգային*** հոգեկեցվածքով և հայրենապաշտ քաղաքացի դաստիարակելու գործում Հայաստանի Հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների հայրենասիրական դաստիարակության անհրաժեշտությունը.

հաստատելով իրենց պատրաստականությունը՝ աջակցելու Հայաստանի Հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների հայրենագիտակցության զարգացմանը միտված միջոցառումների կազմակերպմանը.

ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության օրենսդրության սկզբունքներով, պահանջներով ու իրավական նորմերով ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատություններում ստեղծել ՆԶՊ առարկայի շրջանակներում հայրենասիրական խմբակներ և ըստ ամենայնի օժանդակել նրանց արդյունավետ գործունեության իրականացմանը։

ՀՀ կրթության և գիտության նախարարությունը ապահովում է՝

1. խմբերի սաների հայրենասիրական դաստիարակությանն ուղղված միջոցառումների արդյունավետ իրականացումը;

2. տեխնիկական կազմակերպչական աջակցություն ուսումնական հաստատություններին ՀՀ պետական բյուջեյով նախատեսված միջոցների հաշվին;

3. մասնագիտական բարձր մակարդակ և պատրաստվածություն ունեցող մասնագետների մասնակցություն;

ՀՀ Պաշտպանության նախարարությունը

1. աջակցում է նյութատեխնիկական բազայի համալրմանը և փառքի սրահների կարավորմանը;

2. սաների մասնակցությամբ իրականացվող ամառային ճամբարների և բանակումների, մարզառազմական խաղերի իրականացմանը;

3. հանրակրթական ուսումնական հաստատություններում հրաձգարանների կառուցմանը;

4. կազմակերպում է սաների այցելություններ ՀՀ ԶՈՒ մարտական փառքի վայրեր, ինչպես նաև կրակային պարապմունքներ;

5. միջնորդում է ՀՀ ՊՆ ռազմական ուսումնական հաստատություններում սաների ուսումնառու ձգտումներին, ինչպես նաև սաների առողջական խնդիրների դյուրին լուծմանը։

Գործնական պատրաստություն

ԲԱԺԻՆ 1. Մարտավարական-ֆիզիկական պատրաստություն

Թեմա 1. Նախավարժանք

Թեմա 2. Մարտական իրադրությունում անհրաժեշտ անձնային որակների ուժեղացմանն ուղղված հատուկ վարժանքները: Շարժումների կոորդինացիա և հավասարակշռության պահպանում:

Թեմա 3. Շնչառություն: Շնչառության կանոնավորմամբ վազք:

Թեմա 4. Անցումներ և գլորումներ:

Թեմա 5. Մարտական պայմաններում ինքնաձիգը կրելու ձևերը:

Թեմա 6. Հրաձգային կայուն դիրքավորումները (կանգնած, ծնկած և պառկած): Անցում մի դիրքավորումից մյուսին:

Թեմա 7. Տեղաշարժը մարտի դաշտում: Արագ և քողարկված տեղաշարժ առանց զենքի և զենքով:

ԲԱԺԻՆ 2. Կրակային պատրաստություն

Թեմա 1. Ինքնաձիգի կառուցվածքը։ Ինքնաձիգի ոչ լրիվ քանդելն ու հավաքելը։ Ինքնաձիգի մաքրում։

Թեմա 2. Պառկած դիրքում ինքնաձիգը (հրացանը) ուսին հարմարեցնելը, նշան բռնելը, ձգանը քաշելը։

Թեմա 3. Փամփշտատուփը լցնելը և դատարկելը դաշտային պայմաններում։

Թեմա 4. Ինքնաձիգից կրակ վարելու և նշանառության միատեսակության ապահովման հմտությունների զարգացում.

- կրակագծում ինքնաձիգի նույնական ֆիքսումը 4 տեղով,
- ցուցամատի տեղադրումը և ձգանի սահուն քաշումը,
- շնչառության ապահովումը (հապաղումը),
- դիտարկման կետերի (նշանոցի կտրվածք, նշանահատիկ, թիրախ) նկատմամբ աչքի ֆոկուսի ընտրությունը և դրա ապահովումը։

Թեմա 5. Ձեռքի բեկորային նռնակների նետումը կանգնած դիրքից։

ԲԱԺԻՆ 3. Ռազմական տեղագրություն

Թեմա 1. Կողմնորոշում տեղանքում առանց քարտեզի։

Թեմա 2. Մագնիսական ազիմուտի որոշումը տեղագրական քարտեզով և կողմնացույցով։ Ազիմուտով շարժվելը տեղանքում։

ԲԱԺԻՆ 4. Հոգեբանական պատրաստություն

Թեմա 1. Կարգապահության կարևորությունը

Թեմա 2. Հոգեբանական համատեղելիությունը։ Լիդերության ձգտում։

Թեմա 3. Անհանգստություն, վախ, տագնապ. Ինչպես հաղթահարել դրանք։

ԲԱԺԻՆ 5. Առաջին բուժօգնության հիմունքներ

Թեմա 1. Կայծակնահարումից և հոսանքահարումից պաշտպանությունը։ Առաջին օգնություն։

Թեմա 2. Արևահարություն, ջերմային հարված, ջրազրկում, այրվածքներ։ Պրոֆիլակտիկան։ Առաջին օգնությունը։

ԲԱԺԻՆ 6. Անվտանգ կենսագործունեություն

Թեմա 1. Կրակի ստացումը, պահպանումը և քողարկումը դաշտային բարդ պայմաններում։

Թեմա 2. Ջրի հայթայթումը, մաքրումը (ֆիլտրումը) և մանրէազերծումն առձեռն միջոցներով։

ԲԱԺԻՆ 7. Առաջին օգնություն

Թեմա 1. Տուժածին մոտեցումը, զննումը, գնահատումը և առաջին օգնության ցուցաբերումը տեղանքում՝ սեփական անվտանգության ապահովմամբ։

Թեմա 2. Արյունահոսության դադարեցում։

Թեմա 3. Վերքի մշակում։

Թեմա 4. Վիրավորի տարհանում։

Թեմա 5. Սանիտարահիգիենիկ կանոնների պահպանումը դաշտային պայմաններում։

ՈՒսումնամեթոդական աշխատանք

- Կարգապահական հարցեր,
- Սովորողի սխալի իրավունքը,
- Հարցադրումների մեթոդը,
- Ցուցադրման մեթոդը,
- Մրցակցային մեթոդ,
- Խաղերի մեթոդը,
- Ինքնուրույն աշխատանք,
- Աշխատանք տեղադասերով։

Ծանոթություն.

Զինղեկների վերապատրաստումը՝ համաձայն այս ծրագրի, իրականացվում է սույն հ/կ-ի գործնական և տեխնիկական աջակցությամբ։

Սույն վերապատրաստման ծրագրով առանձնացվել են դպրոցական ՆԶՊ ընդհանուր ծրագրի առավել կարևոր թեմաները։ «Շարային պատրաստություն», «Զինվորական կանոնադրություններ» և «Լեռնային պատրաստություն» բաժիններից ծրագրով առաջադրվող թեմաների ուսումնասիրությունը իրականացվում է ինքնուրույն։